

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔԸ

Հարություն Հովհաննեսի Հովակիմյանի «Լույսի բնեղացման տարածական դինամիկան հեղուկ բյուրեղներում և նրանց ներկանյութային խառնուրդներում» Ա.04.21 «լազերային ֆիզիկա» մասնագիտությամբ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Լուսային փնջերի դեկավարման մեթոդների զարգացումը աննախադեպ հաջողությունների բերեց երբ այդ խնդիրների լուծման համար կիրառվեցին հեղուկ բյուրեղներ (ՀԲ), քանի որ արտաքին էլեկտրական դաշտի ազդեցությամբ հնարավոր է փոփոխել դրանց բեկման ցուցչի բաղադրիչները։ Այդ սկզբունքի հիման վրա աշխատող սարքերը կամ սարքերի առանձին հանգույցները արագ մտան գիտության և տեխնիկայի տարրեր ոլորտներ։ Սակայն ՀԲների տարատեսակները այնքան շատ են և դրանց ֆիզիկական հատկություններն այնքան բազմազան, որ հիմա դժվար է պատկերացնել, թե ինչպիսի անակընկալներ կմատուցեն դրանք գիտության հետագա զարգացման ընթացքում։ Ներկայացված ատենախոսության թեման գտնվում է հենց այդպիսի զարգացման մայրուղիներից մեկում, քանի որ նվիրված է լույսի բարդ ոչիզուրոպությամբ օժուված ՀԲներում տարածման առանձնահատկությունների ուսումնասիրությանը, հատկապես լույսի բնեղացման վարքին։ Այստեղ է, որ բնեղացումային չափումները թույլ են տալիս բարձր ճշտությամբ որոշել նյութի օպտիկական պարամետրերը և դրանց կախումը հաճախությունից։ Այդ առումով ակնհայտ է, որ ատենախոսության թեման հրատապ է և հետաքրքրաշարժ։ Ուսումնական նաև, որ ոչ իզոտրոպ միջավայրերի օպտիկայում կիրառվող մաթեմատիկական ապարատը բավականաչափ բարդ է, նաև ապարատը բնականապես պահպանվում է իզոտրոպ միջավայրերի դեպքում, կամ գիրուտրոպ միջավայրերի դեպքում։

Հ.Հովակիմյանի ատենախոսությունը բաղկացած է Ներածությունից, երեք գլուխներից, Ամփոփումից և 106 անվանում պարունակող հղումների ցանկից։ Յուրաքանչյուր գլուխ սկսվում է ներածությունով, որում հակիրճ ներկայացվում է այդ զիստում քննարկվող խնդրի արդի վիճակը, և ավարտվում է ամփոփումով, որտեղ բերվում են տվյալ զիստում ստացված արդյունքները։

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության արդիականությունը, ձեակերպված են աշխատանքի նպատակները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնադրույթները և կիրառական նշանակությունը։

Առաջին Գլխում ներկայացված է ատենախոսության թեմային առնչվող զրականության վերլուծությունը, ինչպես նաև քննարկվում են ատենախոսության խնդիրների լուծման համար կիրառված մեթոդները։ Քննարկված են ՀԲների հիմնական առանձնահատկությունները, դրանց կիրառման ոլորտները, ինչպես նաև ոչ իզոտրոպ միջավայրերում լույսի տարացման օրինաչափությունները։ Հատուկ ուշադրությամբ են դիտարկվել նեմատիկ ՀԲները՝ որպես ատենախոսության ուսումնասիրման առարկա։

Հիմնավորվում է Զոնսի մեթոդի և Սոորսի պարամետրերի օգտագործման նպատակահարմարությունը: Շոշափվում է նաև ոչ խորորոշ միջավայրերի օգտագործությունը բժանուային մեխանիկայի արտարին դաշտում գոևնող երկ և եռամսկարդակ համակարգերի վարք նկարագրող հավասարությունների նմանության հարցը:

Երկրորդ Գլխում դիտարկված է ոչ խորորոշ թվայս կողմանորշմանը նեմատիկ ՀԲՆերեւմ բներացված լույսի տարածման ուսումնասիրությանը երկրաչափական օպտիկայի մոտավորության շրջանակներում, ինչպես նաև սուստիմ արդյունքների փորձարարական սոուզմանը: Օպտիկական առանցքի պառույր դիտարկվում է որպես ոչիզուրոպության անհամասեռություն: Բերված է նյութերի ընտրության հիմնավորումը և դրանց առանձնահատկությունների ընարկումը: Քննարկված է ուսումնասիրվող նյութի, որն իրենից նորկայացնում է թվայս կողմանորշմանը նեմատիկ ՀԲ-ի և պլեռորիկ մոլեկուլների խառնուրդ, կառուցվածքի ձևավորումը: Քննարկված է դիտարկվող խառնուրդի դիելեկտրիկ բափանցելիության ընդհանուր տեսքը: Դուրս են բերվում ոչ խորորոպության և կանոնան անհամասեռությամբ օժուլած միջավայրում հարք ալիքի տարածման հավասարությունը:

Ցոյց է տրված, որ երկրաչափական օպտիկայի մոտավորության շրջանակներումայն հավասարությունները բերվում են առաջին կարգի երկու կապերած հավասարությունների համակարգի, ինչը հիշեցնում է արտարին դաշտում գոևնող բվանուային երկմակարդակի համակարգը նկարագրող Շրեդինգերի հավասարությունը ոչ էրիտական համիլտոնիանով: Վերջին հանգամանքը պայմանավորված է նյությ կողմից լույսի կրանմանը: Ստացված է այդհամակարգի ճշգրիտ լուծումը ինչը հնարավոր է դարձել պատվող կոռորդինատուական համակարգին անցնելու շնորհիվ: Այնուհետև տուացված անալիտիկ արտահայտությունները կիրառվում են ալիքի էլեկտրագիան տարածման ընթացքում վերլուծելու համար խառնուրդի բաղադրիչների կոնկրետ ընտրության դեպքի համար: Վերլուծված է էլեկտրական դաշտի  $x$  և յրադադրիչների վարքը մուտքում ազիմուտային անկյան տարբեր արժեքների դեպքում:

Նմանատիպ ուսումնասիրությունն է իրականացվել նաև ուժեղացման ռեժիմի համար, եթե ներկանյութի մոլեկուլները կարող են էներգիա փոխանցել լուսային ալիքին: Այսուղ նույնպես վերլուծվել է էլեկտրական դաշտի վեկտորի էլեկտրագիան մուտքում ազիմուտային անկյան տարբեր արժեքների դեպքում:

Ներկայացված են հեղինակի կողմից իրականացված փորձերի արդյունքները, որոնք հաստատում են հաշվարների կանխազուշակություններթվայս կողմանորշմանը նեմատիկ ՀԲ-ներկանյութ խառնուրդում բներացված լույսի տարածման վերաբերյալ: Չափումներ են կատարվել ոչ միայն խառնուրդի համար, այլ և մարուր նեմատիկ ՀԲ-ի համար: Մանրամասնորեն ընարկվում են փորձի արդյունքները ընկնող լույսիզգային բներացման  $x$  և  $y$  ուղղությունների դեպքերում: Բերված են նաև համակարգային մոլելավորման արդյունքները, որոնք հիմնված են տարածման հավասարությունների լուծումների վրա:

Երրորդ Գլուխը նվիրված է ալիքի տարածման ուղղությամբ մոդուլացված գիրուրոպությունը՝ միջավայրում ալիքի եվոլուցիայի ուսումնասիրմանը: Երկրաշափական օպտիկայի մոտավորության շրջանակներում ստացված է էլեկտրական դաշտի լայնութեների համար առաջին կարգի գծային դիֆերենցիալ հավասարումների համակարգը: Վերջինս չունի անալիտիկ լուծում զիրացիայի գործակցի տարածման կոռորդինատի ուղղությամբ հարմոնիկ կախման դեպքում, ինչի պատճառով համակարգի վերլուծությունը իրականացվում է թվային մեթոդներով: Բերված է ալիքի ինտենսիվության կոռորդինատից և հաճախությունից ունեցած կախման եռաչափ պատկերը: Ցույց է տրված, որալիքի երկարության ~21 *mkm* արժեքների դեպքում տեղի է ունենում այսպես կոչվածտարածական ռեզոնանսի երևույթը,, ինչնալիքների սինթրոնիզմի երևույթն է այն մասնավոր դեպքում, եթե ալիքներից մեկի փուլային արագությունը հավասար է զրոյի: Այնուհետև ներմուծվում է փուլոսապինի վեկտորը, որի բաղադրիչներն իրենցից ներկայացնում են Պառվիի մատրիցների միջին արժեքները Զոնսի վեկտորով նկարագրվող վիճակում: Դուրս է բերված փուլոսապինի վեկտորի եվոլուցիան նկարագրող հավասարումը, որը Բլոխի հավասարման նմանակն է երկմակարդակ ատոմների օպտիկայում: Անցում կատարելով պտտվող կոռորդինատական համակարգին հնարավոր է դառնում գտնել այդ հավասարման լուծումը: Մանրամասնորեն նկարագրված են ալիքի տարածման առանձնահատկությունները տարբեր ռեժիմներում:

Ամփոփումը պարունակում է ատենախոսության հիմնական արդյունքների ձևակերպումները:

Ընդհանուր գնահատական տալով ներկայացված աշխատանքին, հարկ եմ համարաւում շեշտել, որ ստացված են կիրառական նշանակություն ունեցող արդյունքներ, որոնք նոր ուղիներ են բացում լուսային փնջերի պարամետրերի կառավարման համար: Դեռ են նշվեմ նաև ատենախոսության թույլ կողմերը:

1. Երկրաշափական օպտիկայի մոտավորության կիրառելիության պայմանը, որը բերված է էջ 39-ում անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայմանն է: Իրոք՝ այդ մոտավորության շրջանակներում անտեսվում է ալիքի անդրադարձումը միջավայրի անհամասեռություններից, ինչը կուտակվող (կումուլատիվ) երևույթ է: Հետևաբար կիրառելիության բավարար պայմանը պետք է ներառի հեղուկ բյուրեղում ալիքի անցած ճանապարհը:
2. Չի բացահայտված լույսի ուժեղացման ֆիզիկական մեխանիզմը (§2.5.2):
3. Ցավոք՝ հեղինակը որոշ անփութություն է ցուցաբերել աշխատանքի փեակերպման հարցում՝ առկա են վրիպակներ, տեղտեղ կան չսահմանված նշանակումներ, և այլն:

Սակայն, ինչպես արդեն նշվել է, Հարություն Հովակիմյանի ատենախոսությունը պարունակում է կարևոր կիրառական նշանակություն ունեցող գիտական արդյունքներ: Դրված տեսական խնդիրները լուծված են հուսալի մեթոդների կիրառմամբ: Հաճելի է նշել նաև, որ հեղինակը կարողացել է իր կողմից իրականացված փորձով հաստատել

սեփական հաշվարկների արդյունքները։ Այս բոլորը հիմք է տալիս պնդելու, որ ներկայացրած առենածուությունը բավարարում է ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ ՀՀովակիմյանը անկառած արժանի է Ա.04.21 «Լազերային ֆիզիկա» մասնագիտությամբ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման։

Հայ-Ռուսական համալսարանի պրոֆեսոր,  
Ֆ.Ա.Գ.դ. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝  
Ա.Մելիքյան

Ա.Մելիքյանի ստորագրությունը հաստատում էմ։

Հայ-Ռուսական համալսարանիգիտական քրտություն,

բ.գ.թ. Ռ.Կասարարովա

16.07.2020

